ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ- Ծ1011.Մ11007/26-1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ՕԹԵՎԱՆ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «09» «02» 2026 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Արտակ Մանգասարյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Օթևան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Հովհաննիսյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի 1011 «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի 11007 «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված չափաքանակից 82,072,900 (ութսուներկու միլիոն յոթանասուներկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը՝ պարտավորվում է իրականացնել Հայաստանի Հանրապետությունում պետական սոցիալական բնակարանային ֆոնդի պահպանման ու շահագործման ապահովման, ինչպես նաև սոցիալական բնակարանային ֆոնդի բնակիչների տեղավորման, հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանի տրամադրման, համապատասխան պայմանագրեր կնքելու, լուծելու, պայմանագրի կատարման նկատմամբ հսկողության իրականացնելու, սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական օգնության տրամադրելու և այլ սոցիալական ծառայություններ մատուցելու գործընթացը՝ սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 1 հավելվածով նախատեսված Միջոցառումների նկարագրին (այսուհետ՝ Միջոցառումներ) համապատասխան, N 2 հավելվածով սահմանված ֆինանսական ցուցանիշների, բարեգործական և այլ միջոցների շրջանակներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում իրականացվող Միջոցառումները, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. անհրաժեշտությամբ պայմանավորված կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. սույն պայմանագրի N 1 հավելվածի ձևաչափով նախատեսած միջոցառումների իրականացման մասին ներկայացված կատարողական ամսական հաշվետվության վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել (դրական/բացասական եզրակացություն) պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսած միջոցառումների և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են, որի համար տրվում է եզրակացություն՝ համաձայն N 5 հավելվածի:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել՝ հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան.

2.4.2. Միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում փոխհատուցման ենթակա ֆինանսական միջոցների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5 հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի.

2.4.5. Նախարարությանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104 հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները.

2.4.6. Սույն Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում Գլխավոր ֆինանսիստի հաստատմանը ներկայացնել ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը: Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով պայմանավորված՝ համապատասխան հիմնավորումների հետ միասին, Նախահաշվի յուրաքանչյուր փոփոխություն ներկայացնել Գլխավոր ֆինանսիստի համաձայնեցմանը, այնուհետև՝ հաստատմանը.

2.4.7. 2026 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով"

2.4.8. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.9. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը, ըստ պահանջի, ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ.

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից.

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ.

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր.

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությունը հաշվետու ամսվա ավարտից հետո նախարարության պատասխանատու ստորաբաժանում է ներկայացնում Միջոցառումների իրականացման վերաբերյալ Եզրակացություն՝ համաձայն N 5 հավելվածի.

4.2. 4.1 կետով սահմանված Եզրակացության դրական գնահատման դեպքում Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 17-ը, Նախարարություն է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի երկուական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 4 հավելվածի.

4.3. Կազմակերպությունը՝ հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն է ներկայացնում կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 3 հավելվածի.

4.4. Նախարարությունը՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը.

4.5. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության պատասխանատու ստորաբաժանումների կողմից գնահատվում է ՀՀ ԱՍՀՆ 22.06.2016թ. N 69-Ա/1 հրամանի 2.10 կետի, նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության հիման վրա: Միջոցառումների իրականացման 75% և ավել արդյունքի դեպքում պատասխանատու ստորաբաժանումը տալիս է դրական եզրակացություն՝ համաձայն N 5 հավելվածի: 75% -ից ցածր արդյունքի դեպքում, սույն պայմանագիրը ենթակա է վերանայման.

4.6. ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետով պայմանավորված՝ կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված տարեկան աշխատանքների արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

5. Պայմանագրի գինը

5.1. Սույն պայմանագրի տարեկան գինը կազմում է 82,072,900 (ութսուներկու միլիոն յոթանասուներկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերը ու պարտադիր այլ վճարները.

5.1.1. Պայմանագրի տարեկան գինը կողմերի համաձայնությամբ կվերանայվի լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար.

5.2. Կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո կազմակերպությանը տրամադրվում է կանխավճար՝ պայմանագրի գնի 1/12-րդ չափով, դեկտեմբեր ամսին մարելու պայմանով.

5.3. Պայմանագրի գինը իր մեջ ներառում է հաստատուն ծախսեր.

5.3.1. հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի չափը կազմում է 82,072,900 (ութսուներկու միլիոն յոթանասուներկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

5.4. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում.

5.5. Նախարարությունը՝ Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N 4 հավելվածով սահմանված «Հանձնման-ընդունման» երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ֆինանսական միջոցների սահմաններում, բայց ոչ ավելի քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից աճողական) համար նախատեսված գումարի չափից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացված Միջոցառումների դիմաց վճարվելիք գումարի չափը սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գումարի չափը գերազանցելու դեպքում, վճարումն իրականացվում այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության

հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 2026թ. հունվարի 1-ից մինչև դկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար.

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության.

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը).

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

8.5. Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, 4, 5 հավելվածները բաղկացած են 10 էջից և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն Հ/Հ 900011042323 ՀՎՀՀ 01506515	ՀՀ ԱՍՀՆ «Օթևան» ՊՈԱԿ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Թբիլիսյան խճուղի 3/14 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900018002155 ՀՎՀՀ 01537679
Նախարարության գլխավոր քարտուղար՝ Ա. Մանասյան (ստորագրություն) Կ. Տ.	Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. Հովհաննիսյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«09» « 02 » 2026 թվականին կնքված
N ԴՏՊ – Ծ1011.Մ11007/26-1 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

«Օթևան» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում պետական սոցիալական բնակարանային ֆոնդի պահպանման ու շահագործման ապահովման, ինչպես նաև սոցիալական բնակարանային ֆոնդի բնակիչների տեղավորման, հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանի տրամադրման, համապատասխան պայմանագրեր կնքելու, լուծելու, պայմանագրի կատարման նկատմամբ հսկողության իրականացնելու, սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական օգնության տրամադրելու և այլ սոցիալական ծառայություններ մատուցելու գործընթացը:

Կազմակերպության կողմից սպասարկվում են թվով 18 կառույց, որոնցից՝ 9 շենք (187 բնակարանով) և 9 առանձնատուն՝ ընդհանուր 587 անձանց սպասարկելու համար՝ 39,3 հաստիքային միավորի միջոցով:

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Միջոցառման իրականացման ժամկետը	Պահանջվող գումարը(դրամ)
1	ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշմամբ նախատեսված բյուջետային ծախսերի գործառնական	«Օթևան պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) հետ կնքված դրամաշնորհի պայմանագրի նպատակներն են՝ **ա.** պետական սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվելու իրավունք ունեցող անձանց (Հայաստանի Հանրապետության	1) կազմակերպում և իրականացնում է բնակվելու իրավունք ունեցող անձանց բնակեցումը հատկացված բնակելի տարածությունում. 2) բնակիչների հետ կնքում է կացարանի տրամադրման պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015	1) Կազմակերպության կողմից պայմանագրի ստորագրումից հետո օրենսդրությամբ սահմանված ժամկետում բնակչին տրամադրվում է կացարան. 2) սոցիալական բնակարանում բնակվող բնակիչների հետ կնքված են կացարանի տրամադրման պայմանագրեր՝ ՀՀ կառավարության 2015	01.01.2026թ. 31.12.2026թ.	Սույն պայմանագրով նախատեսած և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների շրջանակներում

	դասակարգման 10 բաժնի 07 խմբի 01 դասի «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում»	կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման NN 1, 2 և 5 հավելվածներով սահմանված կարգով և նախատեսված անձանց կացարաններով ապահովման և այլ սոցիալական ծառայությունների տրամադրման կազմակերպումը, **բ.** որպես սոցիալական բնակարանային ֆոնդ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի, շինությունների ընդհանուր օգտագործման ենթակա տարածքների սպասարկումը և պահպանումը **գ.** հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանի տրամադրումը ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն, 2002 թվականի հոկտեմբերի 31-ի N 1701, որոշումների պահանջներին և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2024 թվականի փետրվարի 14-ի N 43-Ա/1	թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշմամբ սահմանված կարգով. 3) իրականացնում է սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված հետևյալ շենքերի ու շինությունների՝ 1.ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/14 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 45. 2.Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Շիրազի փողոց 25 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 24. 3.Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Շիրազի փողոց 26 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 15. 4.Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Շիրազի փողոց 27 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 15.	թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան. 3)սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված 18 շենքերն ու շինությունները պահպանվում և տեխնիկապես սպասարկվում են սահմանված կարգով՝ ապահովելով դրանց անվտանգ, շահագործելի և նպատակային օգտագործումը. 4) բնակիչներին տրամադրվում են շենքում բնակվելու և ընտանիքի կազմի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկանքներ՝ ժամանակին, ճշգրիտ և փաստաթղթային ձևով, ապահովելով բնակիչների իրավունքների իրացումը ու ծառայությունների մատչելիությունը: Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց		

		հրամանի դրույթներին համապատասխան: Սոցիալական բնակարանային ֆոնդի շահառուներ կարող են հանդիսանալ բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն չունեցող, ինքնասպասարկման ապահովման ունակություն ունեցող, ժամանակավոր կացարանում կամ հասարակական նշանակության այլ օբյեկտներում բնակվող հետևյալ անձինք (խմբերը)՝ 1) «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասվող անձինք. 2) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում	5.Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Շիրազի փողոց 33 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 15. 6.Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Շիրազի փողոց 34 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 20. 7.Լոռու մարզ, ք. Սպիտակ, Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փողոց 1-ին փակուղի տուն 2, 4, 6, 8.Երիտասարդության փողոց տուն 1, 2, 57, 58, 9.Երիտասարդության փողոց 4-րդ փակուղի տուն 6, 10.Երիտասարդության փողոց 3-րդ փակուղի տուն 1, ընդամենը 9 առանձնատուն. 11.ք.Երևան, Անդրանիկի փողոց 74/2 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 53.	• Սոցիալական աշխատողի կողմից շահառուի սոցիալական կարիքի գնահատում, ուղղորդում, համապատասխան աջակցության ցուցաբերում, աջակցող միջոցներով ապահովելու գործընթացի կազմակերպում, շահառուի նախասիրությունների բացահայտում և տարաբնույթ ծառայությունների և միջոցառումների կազմակերպում • Խորհրդատվական օգնություն՝ շահառուի իրավունքների ու շահերի պաշտպանություն և դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, անհրաժեշտ		

		հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ ունեցող ընտանիքները, որոնց անապահովության միավորը բարձր է 0-ից կամ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից ցածր եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքները՝ որպես սատարող ընտանիք. 3) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, անապահովության 0-ից բարձր միավոր ունեցող հետևյալ անձինք (ընտանիքները) կամ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության	12.Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ռ. Թորգոմյան փողոց, թիվ 5 շենք. 13. Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գ. Նարեկացու փողոց 3: /ընդամենը՝ սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված՝ սպասարկման ենթակա կառույցների թիվը 18 է, այդ թվում՝ 9 շենք (187 բնակարանով), 9 առանձնատուն/ պահպանումը, տեխնիկական սպասարկումը. 4) բնակիչներին անհրաժեշտության դեպքում տրամադրում է տեղեկանքներ՝ շենքում բնակվելու և նրանց ընտանիքի կազմի մասին. Հատուկ կատեգորիայի դասված անձանց մատուցվում են հետևյալ ծառայությունները, մասնավորապես՝	սոցիալական աջակցության կազմակերպում և աջակցություն սոցիալական խնդիրների լուծմանը՝ փաստաթղթերի և սոցիալական ապահովության խնդիրների լուծման հարցերում		

		կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից ցածր եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված հետևյալ անձինք (ընտանիքները)՝ ա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 3 հավելվածի 14-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված կարգով որպես «միայնակ չաշխատող կենսաթոշակառու» հաշվառված անձինք (ընտանիքներ), այդ թվում՝ նրա (նրանց) աշխատելու դեպքում, բ. միածնող ընտանիք, եթե ամուսիններից մեկը մահացել է, կամ միայնակ անձի կողմից որդեգրվել է երեխա, գ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված	• սոցիալ-հոգեբանական օգնություն. • խորհրդատվական օգնություն. • պայմանագրում նշված այլ ծառայություններ:			

		կարգով փախստական ճանաչված և ապաստան ստացած անձինք: Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց Կացարան տրամադրվում է սեփականության կամ համասեփականության իրավունքով բնակարան (բնակելի տուն) չունեցող, ժամանակավոր կացարաններում, հասարակական նշանակության այլ օբյեկտներում բնակվող, ինքնասպասարկման ունակություն ունեցող՝ 1) աշխատանքի վետերանի կարգավիճակ կամ 40 և ավելի տարվա աշխատանքային ստաժ ունեցող և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խնամողներ չունեցող տարեց անձանց. 2) «հաշմանդամ-երեխա» կարգավիճակ ունեցող երեխայով միածնող ընտանիքի կամ ամուսնական զույգի, եթե ամուսիններից երկուսն էլ ունեն հաշմանդամություն:				

		Կացարանը տրամադրվում է պայմանագրային հիմունքներով՝ մինչև տասը տարի ժամկետով՝ անհատույց, իսկ դրանից հետո վարձակալության հիմունքներով՝ 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման N 5 հավելվածով սահմանված կարգով:				

Նախարարություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի Նախարարություն

Գլխավոր քարտուղար՝ Ա. Մանգասարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կազմակերպություն

«Օթևան» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. Հովհաննիսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
«09» « 02» 2026թ.-ին կնքված
N ԴՏՊ- Ծ1011.Մ11007/26-1 պայմանագրի

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի 1011 «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի 11007 «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների իրականացման նպատակով «Օթևան» ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տրամադրման համար սահմանվող

1. Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցների թիվը, այդ թվում 18 - կառույց

1.1 շենքերի թիվը, այդ թվում 9 - շենք
1.1.1բնակարանների թիվը 187 - բնակարան
1.2 առանձնատների թիվը 9 - առանձնատուն
1.3 առանձին բնակարանների թիվը
1.4 Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցներում բնակվող անձանց (ընտանիքների) թիվը 587 անձ

2. Հաստիքային միավորների թիվը 39,3 հաստիքային միավոր

3. Հաստատուն ծախսեր. 82,072.9 հազ.դրամ

4. Տրամադրվող դրամաշնորհի չափը 82,072.9 հազ.դրամ

այդ թվում՝

Հաստատուն ծախսերի գծով

ա/ հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց.

Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)
հունվար	8,839.4	հուլիս	47,875.8
փետրվար	13,678.8	օգոստոս	54,715.2
մարտ	20,518.2	սեպտեմբեր	61,554.6
ապրիլ	27,357.6	հոկտեմբեր	67,394.0
մայիս	34,197.0	նոյեմբեր	73,233.5
հունիս	41,036.4	դեկտեմբեր	82,072.9
Ընդամենը			***82,072.90***

բ/ հաստատուն ծախսերի սահմանային չափաքանակները ՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի.

Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)
Աշխատանքի վարձատրություն	410000	61,723.8
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	420000	19,749.1
Այլ ծախսեր	480000	600.0
Ընդամենը		***82,072.9***

Նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար՝

Ա. Մանվելյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 3
«09» 02 2026թ.-ին կնքված
N ԳՏՊ-ՇՄՄ-ՄՄՄ007/26-1 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի 1011 «Ամառանոց և կցանքի դժվարին իրավիճակում աջակցություն» ծրագրի 11007 «Սոցիալական բնակարանային ֆոնդի տարածքների ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում «Օթևան» ՊՈԱԿ-ին _____ առանց հաստատուն ծախսերի գծով փոփոխությունն ենթակա գումարի վերաբաշխում

հազ.դրամ

Սեփական հոլովներ			Հաստատված նախահաշվի գումար	Ճշգրտված նախահաշվի գումար	Հաշվետու ժամանակաշրջանում			Տարեսկզբից սկսած			
Ցուցանիշներ					Լրամշակված գումարը	Պետական բյուջեից փոխանցման ենթակա գումարը	Բաշխողական այլ և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Լրամշակված գումարը	Պետական բյուջեից փոխանցման ենթակա գումարը	Բաշխողական այլ և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	բաշխողական կազմակերպության անվանումը
Տնտեսագիտական դասակարգման հոդվածները	Տնտեսագիտական դասակարգման տնտեսագիտական հոդվածների անվանումը	ծածկագիրը									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴՀԱՆՈՒՆ ԾԱԽՍԵՐ՝		x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Հաստատուն ծախս			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Աշխատողների աշխատանքի վարձատրություններ և հավելամասեր		411000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մշտական աշխատողների աշխատանքի վարձատրություններ և հավելամասեր	411110									
	Ժամանակավոր աշխատողներին վճարվող	411120									
	Դասընթացների հիման վրա վճարվող	411130									
Դպրոցական նպաստներ, դպրոցական իրավաբանական և հասարակ վճարներ		412000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Դպրոցական նպաստներ	412210									
	Դպրոցական հասարակական	412220									
Էներգետիկ ծառայություններ		421300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Էներգիայի հատկացումներ	421310									
	Ջեռուցման հատկացումներ	421320									
Կոմունալ ծառայություններ		421300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ջրամատակարարման և ջրահեռացման հատկացումներ	421310									
	Այլ կոմունալ հատկացումներ	421390									
Կապի ծառայություններ		421400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Կապի աշխատակազմին	421410									
	գծային հեռախոսային կապի վճար										
	միջքաղաքային հեռախոսային զանգ										
	ինտերնետային կապ										
	Փոստային և սուրհանդակային վճարներ	421420									
Ապահովագրական ծախսեր		421500	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գույքի ապահովագրություն	421510									
Գույքի և սարքավորումների վարձակալություն		421600	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գույքի վարձակալություն	421610									
	Սարքավորումների վարձակալություն	421620									
Ներքին գործուղումներ		422100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ներքին գործուղումների գրասենյակ	422110									
	Ներքին գործուղումների գծով հյուրանոցային	422120									
	Ներքին գործուղումների կրթահատկացային ծախսեր (տրանսպորտ, սավորություն, գնացք և այլն)	422130									
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		423900	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ընդհանուր բնույթի այլ հատկացումներ	423910									
Մասնագիտական ծառայություններ		424100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մասնագիտական հատկացումներ	424110									
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում		425100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425110									
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում		425200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425210									
	Գրասենյակային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425220									
	Այլ մեքենաների և սարքավորումների	425290									
Գրասենյակային նյութեր և հագուստ		426100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գրասենյակային նյութեր	426110									
	Հագուստ և հանդերձեղեն	426120									
Տրանսպորտային նյութեր		426400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Վառելիքի ծախսեր	426410									
	Այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար	426490									
Առաջնահերթության և լաբորատոր նյութեր		426600	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Բժշկական բնույթի նյութեր	426610									
Սեղմարկային և հատարային սենյակի նյութեր		426700	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Սեղմարկային նյութեր (Մաքրող և հիգիենիկ նյութեր)	426710									
	Հատարային սենյակի նյութեր (Շինանյութեր)	426720									
	Սեղմարկային այլ նյութեր (Մեխանական նյութեր սարքավորումներ)	426730									
Դպրոցական վճարներ		482300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ դպրոցական վճարներ	482390									
Այլ ծախսեր		486100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ ծախսեր	486110									

Տնօրեն՝ _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ _____
(ստորագրություն)

Կ.Տ

N 4 Հավելված
« 09 » « 02 » 2026թ.-ին կնքված
N ԴՏՊ – Ծ1011.Մ11007/26-1 պայմանագրի

Նախարարություն՝	Կազմակերպություն՝
հասցե՝	հասցե՝
հ/հ	հ/հ
հվհհ	հվհհ

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

« »« » 2026թ.
Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝
Նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ , և Կազմակերպությունն՝ ի դեմս Կազմակերպության տնօրեն , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման « »« » 2026թ. N __ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Միջոցառումների իրականացումը համապատասխանում է պայմանագրով նախատեսված Միջոցառումներին և տրամադրման ժամանակացույցին՝ կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « »« » 2026թ–ից « »« » 2026թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	*Քանակը*	*Նվազագույն շահավետ գինը՝մեկ միավորի հաշվարկով (դրամ)*	*Մեկ միավորի գինը (դրամ)*	*Մեկ միավորի համար տրամադրվող դրամաշնորհի չափը (դրամ)*	*Վճարման ենթակա գումարը (հազ.դրամ)*	*Վճարման վերջնաժամկետը ամիս, ամսաթիվը*
1	2	3	4	5=3-4	6=2x.5	7
Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում	x	x	x	x	x	x
Ընդամենը	x	x	x	x		x

հանձնեց՝	ընդունեց՝
/ստորագրություն/ / անուն,ազգանուն/	/ստորագրություն/ / անուն,ազգանուն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 5
«09» « 02 » 2026թ.-ին կնքված
N ԴՏՊ – Ծ1011.Մ11007/26-1 պայմանագրի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « »
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուի անվանումը՝
Կատարողի անվանումը՝

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում Կատարողը « » « » 2026-ից « » « » 2026թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները

N	ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ					
	Անվանումը	Տեխնիկական բնութագրերի համառոտ շարադրանքը	Քանակական բնութագիրը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի
1.	Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում	Սոցիալական տան կացարաններում բնակվելու իրավունք ունեցող անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կացարանի տրամադրման կազմակերպման, բնակիչների հետ պայմանագրերի կնքման, սոցիալական բնակարանային ֆոնդի պահպանման, շահագործման և սպասարկման ապահովման գործընթացի, այդ շենքերում բնակվելու իրավունք ունեցող բնակիչների խնդիրների (իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և այլ սոցիալական խնդիրների) լուծման, աջակցման, կազմակերպման աշխատանք-ների իրականացում				

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն:
(Դրական/բացասական)

_____
պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

« » « » 2026թ.